

516

Թիուզ ս. թ. պատճեն 1

ՄԱԼԵԱՆՑ Ս. ՊԵՂԻՐ.

Յայտնիք

Կ Ր Օ Ւ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թարոյախօսական առակներ  
եւ

Թիսուսի կնանքից պատմուածներ)

Գինն է 15 կղգ.

ՏՓԽԻՌ

Տպարան «Էպօխա» Գանովսկուան № 3.

1910

2(02)

Բ-17

2(02)

Բ-17

9.9.2009

ՀԱՅ

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա. ՊԿԻՐ.

Կ Ր Օ Ն

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3625

Վ Ե Ր Ա

(Քարոյական առակներ  
և  
Թիտուի կեանքից պատմուածներ)



ՏՓԽԻԱ  
Տպարան «Հայօհա» Գանովսկայա № 3.  
1910.

29.08.2013

516

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր հրատարակած «Կրօնի դասաւութիւնը Ա. քաժանմունքում» ձեռնարկի մէջ յարգ. դասաւուները կը գտնեն լիուլի բացատրութիւն այս գրքոյի ուղղութեան և նիւթերի մշակութեան ձեր մասին։ Շաբթական երկու դաս հաշուելով՝ աշնան ամիսներին կարելի է նախաղաւղի (սկզբի 7 գլուխ) նիւթերը խնամքով անցնել, այսինքն նախապատրաստել մանուկներին խօսելու, մտածելու և զգալու մէջ։ Եթէ հնար է՝ դիտել տալ նիւթի ենթակայ առարկան իրականութեան մէջ կամ դասարանին ցոյց տալ նրա մեծադիր նկարը։ — Դեկտեմբերից կը գան Յիսուսի կեանքից պատմուածները. սրբազն պատմութեան մեծադիր պատկերների հետ ցոյց տալ և Հրէաստանի քարտէզը։ Կրօնի առարկայի ամենազօրեղ դասագիրը դասաւուի անձնաւութիւնն է, իսկ այս գրքոյին օժանդակ միջոց է։ պիտի աշակերտների ձեռը տալ միայն այն ժամանակ, երբ կարողանում են կարդալ որպէս զի ընթերցանութեամբ վերայիշեն ու ամփոփեն զրոյցի ու դիտողութեան միջոցով իւրացրած նիւթերը։

Կը թութիւնը միակողմանի չը տանելու համար բարոյականի չափ պիտի հոգ տանել նաև երեխայի զեղարուեստական ձաշակը նըրացնելու վրայ եթէ խնամք ենք տանում դասագրքերի մէջ՝ լաւ պատմութիւններ գետեղել սիրտը բարիացնելու համար, չը պիտի մոռա-



1476-87

նանք, որ նոյնպէս անհրաժեշտ են գեղեցիկ նկարներ աչքն ազնուացնելու համար։ Եթէ ցանկանում ենք, որ նրա մատաղ ուղեղի մէջ բարին ու գեղեցիկը զուգորդուած աճեն ու սիրուն ծիլեր տան, այն ժամանակ աշխատելու ենք, որ մեր ցոյց տուած ամեն մի պատկեր ու նկար լինեն մեծադիր, գեղեցիկ ու ընտիր։ Կրօնի դասագրքերից, մանաւանդ եթէ ստորին բաժանմունքների համար են, պիտի վտարուած լինեն փոքրագիր, մրոտ և անձաշակ պատկերները։ Միջոցների սղութեան պատճառով առ այժմ անկարող եղանք դրբոյկիս առակների ու պատմուածների համեմատ պատկերների ժողովածու կազմել և դրանով աւելի դէւրութիւն տալ կրօնուսոյցներին։ Բայց ժամանակ է, կարծում ենք, որ հայ գրախանութները կամ Հրատ. Ընկերութիւնները ձեռնարկեն դիտողական ուսման և սուրբ պատմուքեան վերաբերեալ ալբոմներ (15—20 պատկերներից) կազմել՝ ընտրելով օտարազգի գեղեցիկ հրատարակութիւններից։ Այդ թերին լրացնելով խիստ օգտակար ծառայութիւն արած կը լինեն հայ դաստուին և հայ դպրոցին։

Իսկ մանկական աղօթքների թիրին, գժրազգաբար երկար ժամանակ զգալի կը լինի մանկավարժ կրօնուսոյցի համար, քանի որ մեր հին մատենագիրների շարադրած աղօթքները մանուկների համար անյարմար են, («Հանգանակ հաւատոյան» ինչ մանկական բան է, որ ծրագիր է մտցրած), նոր մատենագիրներն էլ շատ քիչ են զբաղւում այդ կարևոր ճիւղով։

Յօրինող.

1910 թ. մայիսի 25. Թիֆլիս.

## 1. ՄԱՅՐ ԵՒ ԶԱԻՍԿ

ա. Որդու պատմածը։ Սուրէնը մի աշխոյժ տրդայ էր։ Մի օր դըրսից վազեց տուն և ուրախ ուրախ պատմեց մօրը։ «մայրիկ, գիտե՞ս ինչ. Ես մեր պարտէզում խաղում էի, յանկարծ թրփի միջից ճիւ ճիւ ձայն լրսեցի։ Գրնացի մօտիկ, տեսայ մի քանի տրկլոր ձագեր բընի մէջ։ Նըրանք կըտուցները մեկնում էին դէպի ինձ, կամես ուտելու բան էին ուզում։ Ես զարմանքից աչքերը չըռել էի ու մըտիկ էի անում։ մէկ էլ տեսայ, եկաւ ձագերի մայրը, նըստեց միւս թրփին ու ճիւղի վըրայ օրօրուելով բարկացած չը՛րթշը՛րթ արեց։ Ես այնպէս հասկացայ թէ ինձ ասում է. «Էյ Սուրէն, հեռու կանգնիր, ձագերիս ձեռ մի տալ»։ Ես

իսկոյն անձայն ետ կացայ: Թըռչունը թըռաւ բունը և թևերը փըռեց տըկլոր ձագերի վըրայ ու յետոյ ուրախ, փայլուն աշքերով ինձ մըտիկ արեց. կարծես ինձ ասում էր. « շընորհակալ եմ, Սուրէն, որ ձագերիս վընաս շըտուիր»:

բ. Մօր պատմածը: Մայրըն ասեց. « Սուրէն, իմ սիրելի զաւակ, դու էլ մի ժամանակ թըռչունի ձագի պէս պըստլիկ բան էիր: Ես և հայրը քեզ պարկեցրինք օրօրոցի մէջ, ծածկեցինք ամեն կողմից, որ տաք մընաս: Քաղցելիս դու լաց էիր լինում. ես ծիծը դընում էի քու բերանը, որ կաթով կըշտանաս: Փոքր էիր և թոյլ, կամաց կամաց դու մեծացար ու ամրացար, այժմ կարողանում ես վագել և թըռչկոտել»:

գ. Որդու սէրը: Երբ այս բոլորը լըսեց Սուրէնը, թըռաւ մօր գիրկը, փաթաթուեց վըրով և ասեց. « մայրիկ ջան, որ իմանաս ինչքան եմ սիրում քեզ»: Մայրը Սուրէնի թուշը համբուրեց ու

հարցրեց. « ինչի՞ համար ես սիրում ինձ, զաւակս»: Սուրէնըն աւելի պինդ փաթաթուեց մօր վըրով ու ականջին ասեց. « նըրա համար, մայրիկ ջան, որ փոքր ժամանակը դու ինձ ծիծ ես տուել, կըշտացրել ես, յետոյ երբ ես կանգնել չէի կարող, դու ինձ գըրկած ման ես ածել, յետոյ լողացրել ես, հագցրել ես, պահպանել ես և միշտ այսպէս թուշը քաղցր համբուրել: Ա՛խ, մայրիկ ջան, քեզ այնքան եմ սիրում, որ չեմ կարող լեզուով ասել»:

## 2. ԸՆՏԱՆԻՔ

ա. Կերակրի մասին: Ընտանիքի գըլխաւորներն են հայրն ու մայրը: Մայրն ամեն կերպ հոգս է քաշում զաւակի համար: Նրան ուտելիք և խմելիք է տալիս թէ առաւօտը, թէ ճաշին և թէ երեկոյին: Կերակրութատրաստելու համար շատ բան գնում է փողով, որ վաստակում է հայրը: Ջաւակին սիրում են թէ հայրը և թէ

մայրը. նրա ապրուստի համար հոգս  
են քաշում երկուսը միասին:

բ. Հագուստի մասին. Թուչունը տկլոր  
ձագին ծածկում է թևերով, որ չը  
մըսի: Յետոյ Աստուած ձագին փե-  
տուրէ տաք հագուստ է տալիս:—Ա-  
ռանց հագուստի մարդիկ ձմեռը կը  
մըսէին: Մայրը սիրելի զաւակի հա-  
մար հագուստ է կարում կամ պատ-  
րաստի գնում է այն փողով, որ հայրը  
վաստակում է իրա աշխատանքով:

գ. Բնակարանի մասին. Թուչունը սի-  
րում է ձագերին, հոգս քաշելով բուն  
է շինում, որ տկլոր ժամանակ մէջը  
պատսպարուեն:—Ընտանիքի հայրը և  
մայրը նոյնպէս սիրում են զաւակնե-  
րին. Նրանց համար բնակարան են  
պատրաստում, որ անձրեսի, ցրտի, քա-  
մու, ձիւնի ժամանակ պատսպարուեն:

դ. Խաղալիքի մասին: Ծնողներն իրանց  
փոքրիկ զաւակներին ամենից առաջ  
տալիս են կերակուր, սնունդ, որ չը  
քաղցեն: Յետոյ տալիս են հագուստ,

որ չը մըսէն: Յետոյ տալիս են բնա-  
կարան, որ պատսպարուեն ցրտից,  
անձրեսից, քամուց: Յետոյ էլ նրանց  
ուրախացնելու համար տալիս են խա-  
ղալիքներ զանազան տեսակ:

ե. Խնամելու մասին: Սուրէնը, որ ու-  
րախ վազվլզում էր դռանը, պարտէ-  
զում, յանկարծ հիւանդացաւ: Ծնող-  
ները շատ տիրեցին: Մայրը նրա ան-  
կողնից չէր հեռանում, գիշերն անքուն  
մօտը նստած էր, որ զաւակը ծարա-  
ւելիս ջուր տայ կամ լալիս ցաւը  
հարցնի: Ամեն խնամք տանում էր,  
որ շուտով առողջանայ: Աստծուն ա-  
զօթելով խնդրում էր, որ իրա սիրելի  
Սուրէնին լաւացնի:

### 3. Ո Ր Բ

ա. Ի՞նչ եղանակ էր դուրսը:

Փայլուն արևն արդէն մայր մտաւ.  
Լուսինն էլ վաղուց գնաց թագ կացաւ,  
Գիշերուայ մութը աշխարհս պատեց.  
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

բ. Մարդկանց, երեխանց մասին:

Ամեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ,  
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ.

գ. Խեղճ որքի մասին:

Միայն խեղճ որբը, որ չունէր հայր,  
մայր,

Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր:  
Ոտքերը բորբիկ, տկոր ու քաղցած,  
Միտան պատի տակ մնաց կուչ եկած:

դ. Բարի տանտիրոջ մասին:

Բարի տանտէրը վերևից նայեց,  
Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց:  
Եւ այնուհետեւ տարաբաղդ տղան  
Ունէր իւր համար տէր ու տիրական:

#### 4. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆ ԲԱՆ ՏԵՄՆՈՒՄ Է

ա. Գոհարի եւ Սուրէնի մասին: Գոհարանց և Սուրէնանց ազգականը մեռել էր. հայր ու մայրը զնացել էին մխիթարանք խօսելու: Քոյր և եղբայր մնացել էին տանը մենակ: Սուրէնն

ասեց. «Գոհար, ի՞նչ ենք պարապ նըստել, երբ հայրիկն ու մայրիկը տանը չեն»: «Ի՞նչ անենք, Սուրէն, հարցրեց Գոհարը: «Արի ուտելու բան փընտրենք ու բերաններս քաղցրացնենք», պատասխանեց եղբայրը: «Լաւ, Սուրէն, եթէ տեսնող չի լինիլ կը գամ հետրդ»: «Արի զնանք խոհանոց, այնտեղ դրած է կաթան պղինձը, երեսին սերը կանգնած կը լինի, քաշենք և հացի պատառով ուտենք»: Գոհարն ասեց. «Հէ, չեմ գալ, այնտեղ հարեանը կը տեսնի: Մտիկ, լուսամուտի դէմը փայտ է ձըղձըղում»: Սուրէնն ասեց. «Երբ այդպէս է, զնանք մարանը, տանձ, խնձոր ուտենք»: Գոհարն ասեց. «Հէ, չեմ գալ, հարեանի կինը կը տեսնի, ահա իրա լուսամուտի առաջ նստած գուլբա է գործում»: Սուրէնը քիչ լուռ մնալուց ետ խօսեց. «Լաւ, արի զնանք սարդափը, պահարանից մեղք հանենք, ուտենք. այնտեղ բոլորովին մութն է, մարդ

չի տեսնիլ»։ Գոհարն ասեց. «չէ, չեմ գալ, այնտեղ էլ Աստուած կըտեսնի. Նա երկնքից մտիկ է անում ամեն կողմ ու մութ տեղն էլ տեսնում է»։ Այս խօսքի վրայ Սուրբնի դողը բռնեց ու սարսափելով ասեց. «Եթէ այսպէս է, քուրիկ, աւելի լաւ է, ոչինչ չուտենք մինչև հայրիկի, մայրիկի գալը»։

### 5. ՈՐԴՈՒԻ ԶՂՋՈՒՄԸ

ա. Արշակն ի՞նչպէս յանցանք գործեց. Արշակի հայրը գիւղացի էր և տան մօտ մի պարտէզ ունէր։ Այնտեղ նա նոր տեսակի մի քանի խնձորիք էր տնկել։ Երբ մատաղ ծառերն առաջին անգամ պտուղ բռնեցին, հայրն ուրախացաւ. ամեն օր պարտէզ էր գնում, որ խընձորները հասած տեսնի ու խմանայ, թէ ի՞սչ համ ունեն։

Հարևանի տղէն Արշակի խաղընկերն էր, սա մի օր ասեց. «Արշակ, մեզ տեսնող չը կայ, արի մտնենք ձեր պարտէզը և փոքր ծառերի խըն-

ձորները քաղենք, ուտենք»։ Արշակը նրան լսեց. ներս մտան ու պոկոտեցին։ Մի քանի ըոպէից ետ Արշակի հայրն եկաւ պարտէզ և տեսաւ խակ խնձորները քաղոտած, մատաղ ծառերը տկլորած։ Շատ վշտացաւ ու դառնացած ասեց. «ախ, անպիտան, փնտչ պտուղներ, սիրոս տակն ու վրայ արիք»։

բ. Ի՞նչպէս զղաց Արշակը։ Արշակը հաստ ծառի ետեր նստած էր. լսեց հօր խօսքերը և սիրոը դողաց։ Մինչեւ մութն ընկնելը տուն չը գնաց, թէպէտ շատ քաղցած էր։ Հայրը դռան մօտ կանգնած էր, երբ Արշակն աչքերը քաշ գցած տուն մտաւ։ Ընթրիքի ժամանակ հայրը երեխանց խաղող բաժանեց, Արշակին նոյնպէս մի ճութ տուեց։ Միւս երեխէքը տան մէջ ուրախ թրոշկոտալով մշրում էին խաղողի հատիկները, իսկ Արշակը տխուր նստած մտածում էր հօր այս խօսքերի վրայ. «ախ, անպիտան, փնտչ

պտուղներ, սիրտս տակն ու վրայ ա-  
րիք»։ Սիրտն այնպէս կըսկըծում էր,  
որ չը կարաց լացը պահել. արտա-  
սուքն իրար ետնից թափուեցին։ Հայ-  
րը հարցրեց. «աչքի լոյս, ինչու ես  
լալիս»։ Արշակը տեղից կանգնեց ու  
կըմկըմալէ խօսեց. «հայ..րիկ, խընդ-  
րում եմ, նե..րիր ինձ»։ Հայրը միա-  
միտ ասեց. «սիրելի զաւակ, ինչ ես  
արել, որ քեզ ներեմ»։ Արշակը հազիւ  
լացը պահելով կըմկըմաց. «Հարե..ւա-  
նի տը..ղէն ա..սեց, ա..րի մըտ..նենք  
ձե..ր պա..րտէ..զը, փո..քը ծա..ռե..րի  
խըն..ձորնե..րը քաղո..տենք»։ — «Հա,  
խմացայ յանցանքդ, դու էլ ի հարկէ  
գնացիր հետը, խակ խակ քաղոտեցիր»,  
խօսեց հայրն առանց բարկանալու։  
Արշակն էլ չըկարաց իրան պահել,  
սկսեց նորից հեկեկալով աղի աղի լաց  
լինել։ Հայրը նրա թեփց քաշելով  
զրկեց ու ասեց. «ներում եմ քեզ,  
Արշակ, տայ Աստուած, միւս անդամ  
էլ այդպիսի բան չը բռնես»։

#### 6. ՃԱՄԲՈՐԴ ՊԱՏԱՆԻՆ ԵՒ ԱՐՏՈՒՏԸԼ

ա. Ի՞նչ հարցընց պատանին։ Մի պա-  
տանի լուսաբացին արտերի մօտով  
անցնում էր, տեսաւ արտուտին, որ  
օդի մէջ թըրթըռալով ուրախ երգում  
է։ Նրան շատ դուր եկաւ թուչունի  
ծըլվլան ձայնը, կանգնեց նայեց ու  
հարցրեց. «Արտուտիկ, ինչու համար  
ես այդպէս ուրախ երգում»։ Արտուտը  
պատասխանեց. «ինչու չը պիտի ու-  
րախ երգեմ, երբ Աստուած ինձ այն-  
քան բարիքներ է տուել։ Իմ ծըլվլան  
ձայնով ասում եմ. «Հնորհակալ եմ  
քեզանից, ողորմած Աստուած, որ ինձ  
ստեղծել ես ու պահպանում ես»։

բ. Ի՞նչ հարցընց արտուտը. Յետոյ ար-  
տուտը դարձաւ պատանուն, հարցրեց.  
«այ ճամբորդ, արդեօք դու էլ շնոր-  
հակալութիւն անժւմ ես ստեղծող  
Աստծուն»։ Պատանին պատասխանեց.  
«այն, արտուտիկ, ես էլ եմ անում»։  
Ու յետոյ զիլ ձայնով սկսեց «Առա-

ւօտ լուսոյց երգը ու ճամբէն շարունակելով գնաց:

### 7. ԱԶՆԻՒ ՄԻՐՏ

ա. Ազնիւ աղայի կամ աղջկայ մասին: Ազնիւ տղէն կամ աղջիկը պիտի լիի իրախղճի ձայնին, որ գալիսէ կըրծքի տակից: Եթէ մէկը ազնիւ չէ, նա չի կարող ոչ լաւ զաւակ լինել ոչ լաւ աշակերտ կամ աշակերտուհի և ոչ լաւ ընկեր կամ լաւ ընկերուհի: Ազնիւ տղայ կամ ազնիւ աղջիկ լինելու համար պիտի ունենալ ազնիւ սիրու:

բ. Հաւսիրտ զաւակի մասին: Զաւակն ամենից շատ սիրում է ծնողներին, որովհետև կեանքով նրանց է պարտական: Խղճի ձայնն ասում է. «սիրիր ծնողներիդ»: Բայց ծնողներին բացի սիրելը, իբրև տան զլիսաւորների պիտի նոյնպէս յարգել, նրանց խրատները լսել և ոչ թէ անկարգ տղայի պէս նրանց հետ վարուել իբրև


հասարակ ընկերի հետ: Վատսիրտ զաւակները միայն չեն կարող սիրել ու յարգել ծնողներին:

գ. Հնազանդ զաւակի մասին: Ծնողներին սիրող զաւակը միշտ հնազանդ է լինում և ուրախացնում է նրանց: Ծնողներին չը հնազանդել, նշանակում է նրանց վշտացնել: Անհնազանդ որդին ապերախտ արարած է, նա սիրտ չունի. սիրտ չունեցողը խիղճ էլ չի ունենալ, իսկ խիղճ չունեցողը չի կարող լինել ազնիւ տղայ կամ ազնիւ աղջիկ:

### 8. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

ա. Ո՞րտեղ ծնունց Յիսուսը: Յիսուսի ծընողները, Մարիամն ու Յովսէփը ապրում էին Նազարէթ քաղաքում: Նազարէթը գլուխում է Հրէաստանում, ուր ողջ տարին տաք է, ձմեռ չը կայ:

Այդ ժամանակ Օգոստոս կայսրից հրաման էր դուրս եկել, որ ուրիշների պէս Յովսէփն էլ գնայ իրա ծնուած քաղաքը և անունը ցուցակի մէջ գրել տայ: Մարիամը յղի էր. Յովսէփը նրան աւանակի վրայ



Նստացրեց և հետը տարաւ։ Երկար ճանապարհ գնացին ու մթնով հասան Բեթղեհէմ փոքր քաղաքը, ուր այնքան օտարականներ էին հաւաքուել, որ ազատ բնակարան չը կար. բոլոր տները հիւրերով բռնուած էին։ Յովսէփն ու Մարիամը այնտեղ քնելու տեղ չը գտան, անձարացած գնացին մի ոչխարի փարախ, որ զիշերն անցկացնեն։ Մարիամի ազատուելու ժամը մօտ էր. Աստուած նրան ուրախացրեց և տուեց առջնեկ որդին, որ կոչուելու էր Քրիստոս։ Ծնողները բարուրով փաթաթեցին և դրին մսուրի մէջ։

Բ. Աստծու հրեշտակը հովիների մօտ։ Այդ զիշեր հովիւները հեռու դաշտում պահպանում էին իրանց խաչները։ Յանկարծ Աստծու հրեշտակը երևաց նրանց և իրա տեսքով նրանց բոլորքը լուսաւորեց։ Այդ բանից նրանք շատ վախեցան։ Հրեշտակն ասեց. «Միք վախենալ. եկել եմ ձեզ մեծ աւետիք տալու, որովհետեւ այսօր Բեթղեհէմում ծնուեց մանուկ Քրիստոսը, որ ժամանակով մեծ ուրախութիւն պիտի բերի աշխարհ, մարդկանց այնտեղը պիտի հասցնի, որ նրանք իրար հետ եղօր ու քրոջ պէս սիրով ապրեն։ Այդ նորածին մանուկին դուք կը գտնէք ձեր փարախում, բարուրով փաթաթած և մսուրի մէջ դրած»։ Այդ ասեց թէ չէ, հրեշտակի մօտ երևացին։

ուրիշ բազմաթիւ հրեշտակներ, որոնք երգելով ասում էին. «Փառք լինի Աստծուն երկնքում, խաղաղութիւն երկրի վրայ այն մարդկանց միջոցով, որոնք Աստծուն հաճելի են»։

Գ. Հովիները մանուկ Քրիստոսի մօտ։ Հրեշտակները երկինք վերացան թէ չէ, հովիւներն ասին իրար. «Եկէք գնանք Բեթղեհէմ, տեսնենք, այս ի՞նչ բան է, որ Աստուած մեզ ցոյց տուեց»։ Շտապով ճանապարհ ընկան, գնացին, գտան նորածնին մսուրի մէջ, Յովսէփն ու Մարիամն էլ նրա կողքին։ Հովիւները մանրամաս պատմեցին, ինչ որ հրեշտակից մանուկի մասին լսել էին։ Նըրանք զարմանում էին այս բանի վրայ, բայց աւելի շատ Մարիամն էր ցնծում ու լսածները սրտի մէջ պահում։ Հովիւները վերադառն խաչների մօտ. ում հանդիպում էին, իրանց տեսածն ու լսածը պատմում էին։

Յիսուս Քրիստոսի ծննդեան տօնը հայերի համար յունվարի 5-ի երեկոյին է։

### ԾՆԸՆԴԵԱՆ ԵՐԳ

Այսօր տօնն է սուրբ ծննդեան, աւետիս, Մեր Քրիստոսի մեծ յայտնութեան, աւետիս, Այսօր արև արդարութեան, աւետիս, Երկեցաւ անթիւ մարդկան. աւետիս։

Խորհուրդ մեծ և սքանչելի,  
Որ այսօր մեզ յայտնուեց.  
Հըեշտակի, հովուի բերնով  
Ողջ աշխարհին աւետուեց.  
Ծնաւ Փրկիչ, նոր արքայ  
Բեթղեհէմի մօտերքում,  
Որդիք մարդկան օրհնեցէք,  
Որ մարմնացաւ աշխարքում,  
Անբաւելին երկնում և երկրում  
Բարուրի մէջ փաթաթուեց,  
Չը մեկնելով Հայր-Աստծուց  
Այրի մսրումը բազմեց:

### 9. ԱՐԵՒԵԼՔԻ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ

ա. Իմաստուն մարդիկ եկան մանուկ Քրիստոսին տեսնելու։ Արևելքի իմաստունները, որոնք մոգ էին կոչւում, հին գրքերի մէջ կարդացել էին, որ ժամանակով մի մարդ է աշխարհ գալու ու մարդկանց սրտերն այնպէս ուղղելու, որ նրանք կուռելու տեղ իրար պիտի սիրեն։ Երկար ժամանակ սպասում էին այդ մարդուն։ Յանկարծ մի զարմանալի բան տեսան. երկնքում մի այնպիսի աստղ երևաց, որի նմանը ոչ ոք չէր տեսել։ Նա աւելի պայծառ ու սիրուն էր փայլում, քան թէ միւս աստղերը։ Իմաստունները մտածեցին. «Աստուած կամենում է այդ աստղի միջոցով մեզ ասել,

որ այն բարի մարդը ծնուել է»։ Աստղին հետևելով երկար ճանապարհ կտրեցին ու արեելեան կողմից եկան հասան Հըեաստան աշխարհը, որտեղ Բեթղեհէմն էր. Բայց նըրանք ուղղակի գնացին Երուսաղէմ, որտեղ Հերովդէս թագաւորն էր նստում։ Իմաստունները հարցրին. «Ո՞ւր է հրէաների նորածին թագաւորը, մենք նրա աստղը տեսանք արեելքում. այժմ եկել ենք նրան երկրպագութիւն տալու»։ Ամենն էլ շփոթուեցին այս բանը լսելով. ոչ թագաւորը տեղեկութիւն ունէր մանուկ Քրիստոսի ծնունդի մասին և ոչ ժողովուրդը։

բ. Իմաստուններն իմացան Յիսուսի ծնուած տեղը։ Հերովդէսը շատ շփոթուել էր. կանչեց իրա մօտ քաղաքի իմաստուն և գիտուն մարդկանց ու հարցրեց, թէ որտեղ է ծնուելու Քրիստոսը։ Նրանք պատասխանեցին. «մեր հին սուրբ գրքերում գրուած է, որ մանուկ Քրիստոսը ծնուելու է Բեթղեհէմ փոքր քաղաքում»։ Այդ որ լսեց Հերովդէսը, մոգերին ծածուկ կանչեց իրա մօտ, ճիշտ իմացաւ թէ Երբ է աստղը երևացել, յետոյ ասեց. «Գնացէք Բեթղեհէմ, նորածնի համար հարց ու փորձ արէք, երբ գտնէք, ինձ իմաց տուէք, որ ես էլ զամ նրան երկրպագեմ»։

գ. Իմաստունները մանուկ Յիսուսին գտան Բեթղեհէմում. Իմաստունները Հերովդէսի մօ-

տից դուրս եկան և գնացին. բայց նրանք մանուկին հեշտութիւնով չէին գտնիլ, եթէ Աստուած նրանց չէր օգնել: Երբ Բեթղեհէմ հասան, տեսան արևելքի պայծառ աստղն այնտեղ: Երկնքում բարձր նրանց առաջնորդում էր. գնաց ու վերջը կանգնեց այն այրի գլխին, ուր մանուկն էր: Իմաստուններն անչափ ուրախացան, մտան ներս ու տեսան մանուկին իրա մայր Մարիամի հետ. ծունր դրին և երկրպագեցին. նոյնպէս իրանց հետ բերած գանձերը բանալով շատ ոսկի և թանկագին ընծաներ տուին:

### Ե Բ Գ

Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս. Շատ պլազան մի աստղ տեսան, աւետիս. Երբ աստղի հետ մի տեղ հասան, աւետիս. Մի խոր ու լայն քարայր մտան, աւետիս. Այնտեղ գտան սուրբ մայրիկին, աւետիս. Ամենասուրբ մանուկ գրկին, աւետիս. Շատ պարզմներ տուին նրան, աւետիս. Ոսկի, կնդրուկ շատ պատուական, աւետիս:

### 10. ԵԳԻՊՏԱՍ ՓԱԽԶԵԼԸ

ա. Ի՞նչպէս ազատուեց մանուկ Քրիստոսը Իմաստունները կամենում էին գնալ թագաւորին յայտնել մանուկ Քրիստոսի ծնուած տեղը, բայց հրեշտակը երազում նրանց երևաց և ասեց, որ Հերովդէսի մօտ չը գնան:

Այդ պատճառով մոգերն ուրիշ ճանապարհով գնացին իրանց աշխարհը:

Երբ Հերովդէսը տեսաւ, որ մոգերը չը վերադարձան, խիստ չարացաւ, հրաման արեց իրա զինուորներին, որ գնան Բեթղեհէմ մանուկ Յիսուսին սպանեն: Բայց հրեշտակը խափանեց այդ մտաղըութիւնը, երևաց Յովսէփին երազում ու ասեց. «Յօվսէփ, Հերովդէս թագաւորը փնտրում է մանուկ Յիսուսին, որ սպանի: Վեր կաց, վերցրու մանուկին, իրա մօրը և փախիր Եղիպտոս և այնտեղ կաց մինչև քեզ իմաց անելը»: Յովսէփը մուժ գիշերով վեր կացաւ, նստացրեց մանուկին և Մարիամին աւանակի վրայ ու ճանապարհ ընկաւ դէպի Եղիպտոս:

բ. Յովսէփն ու Մարիամը ո՞րքան մնացին Եղիպտոսում: Հերովդէսն արդէն մեռել էր: Ահա Աստծու հրեշտակը երևաց Յովսէփին երազում և ասեց. «Յօվսէփ, վեր կաց, վերցրու մանուկին և իրա մօրը և վերադրձիր հայրենիք: Հերովդէսը, որ ուզում էր մանուկ Քրիստոսին սպանել, մեռել է»: Յովսէփը վեր կացաւ, վերցրեց մանուկին, Մարիամին և եկաւ իրա հայրենիքը, բայց Բեթղեհէմ չը մտաւ, այլ գնաց Նազարէթ և ապրեց այնտեղ:

### ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՋԹՔ

Բարերար Աստուած և ողորմած Տէր,  
Պահիր, պահպանիր Դու մեղ այս գիշեր.  
Որ առաւօտեան զուարթ վեր կենանք,  
Քո սուրբ անունը օրհնենք ու փառք տանք:

### ԱՌԱԽՈՏԵԱՆ ԱՂՋԹՔ

Ով Տէր մեր գթոտ, դու լոյս առաւօտ,  
Ծագիր և մեղ մօտ քո լոյսդ անազօտ.  
Թող լուսաւորուին մեր միտքն ու հոգին,  
Որ քո լոյս անուան լինենք փառաբան:

### 11. 12 ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՅԱՐՈՒՄ

ա. Յիսուսն առաջին անգամ Երուսաղէմում:  
Յիսուսի ծնողներն ամենայն տարի Զատկի  
տօնին գնում էին Երուսաղէմի տաճարը:  
Երբ Յիսուս 12 տարեկան դառաւ, նրան էլ  
հետները տարան: Նրանք գնում էին իրանց  
ծանօթների ու բարեկամների հետ. ճանա-  
պարհը երկար էր. մի քանի տեղ գիշերը  
քնեցին: Հրէաստանի ամեն ծայրերից ժո-  
ղովուրդը թափւում էր Երուսաղէմ: Այդ  
պատճառով նրա փողոցների մէջ բազմու-  
թիւնը, ժողովուրդը իրար հարհրելով էր  
անցնում:

բ. Պատանի Յիսուսին ծնողները փնտրում  
էին: Երուսաղէմի տօնախմբութիւնը քաշեց  
հօթն օր: Դրանից ետ Յովսէփն ու Մա-

րիամը ճանապարհ ընկան տուն գալու: Աչք  
ածեցին, տեսան պատանին չը կայ և նրանք  
չէին իմանում, որտեղ փնտրեն, որ գտնեն:  
Մտածում էին. «կարելի է, Յիսուսը մեր  
ծանօթների հետ առաջուց գնացել է, նրան  
կը հանգիպենք երեկոյեան իջևանում»:  
Ծնողները մի օրուայ ճանապարհ գնացին,  
հարց ու փորձ արին հարևաններին, ծա-  
նօթներին, բայց իջևանում պատանուն չը  
գտան: Նրանք ճարահատած կրկին գարձան  
Երուսաղէմ. ամեն կողմ փնտրեցին, երբորդ  
օրը գնացին տաճարը և այնտեղ հազիւ գը-  
տան իրանց տղային:

գ. Ի՞նչ էր անում՝ Յիսուսը տաճարուա: Յի-  
սուսը տաճարի մէջ նստած լսում էր ու-  
սուցիչների, գիտունների ասածները. Երբ  
մի բան չէր հասկանում, խնդրում էր, որ  
իրան բացատրեն: Նրանց այնպիսի խելօք  
հարցմունքներ էր տալիս, որ նրան ականջ  
գնողները զարմանում էին նրա իմաստու-  
թեան վրայ: Երբ ծնողները նրան այնտեղ  
տեսան, ապշելուց չը գիտէին՝ ի՞նչ ասեն:  
Մայրը խօսեց, «այ որդի, այս ի՞նչ բերիր  
մեր զլուխը, երեք օր է ես ու հայրդ քեզ  
փնտրելով ուժասպառ եղանք: Այս ո՞ւր ես»:  
Յիսուսը պատասխանեց. «ինչո՞ւ էիք ինձ  
փնտրելու համար այդքան նեղութիւն բա-  
շում. միթէ չը գիտէք, որ ես իմ Հօր տանը  
կը լինեմ»: Ծնողները չը հասկացան նրա

ասածի միտքը: Յիսուսը նրանց հետ դուրս եկաւ տաճարից և գնաց Նազարէթ: Ծնողների խօսքին միշտ հնազանդ էր: Մայրը նրա ասածները պահում էր սրտի մէջ: Յիսուսը զարգանում էր թէ հասակով և թէ խելքով ու լցում մարդկային ու աստուածային շնորքներով:

### ԱՂՕԹՔ ՀԱՅԲ-ԱՍՏՇՈՒԻՆ

Երկնաւոր Հայր, սուրբ լինի քո անունը, գայ քո թագաւորութիւնը, քո կամքը կատարուի ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրի վրայ: Այսօր տուր մեզ մեր հանապագօրեայ հացը: Ներիր մեր պարտքերը, ինչպէս մենք ներում ենք մեր պարտապաններին: Մեզ փորձութեան մի տանիլ, այլ փրկիր չար բաներից, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը յաւիտեանս. ամէն:

### 12. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

ա. Ո՞վ էր Յովհաննէս մարգարէն: Յիսուսի ապրած աշխարհում — Հրէաստանում կար մի գետ, Յորդանան անունով, որ հոսում էր հիւսիսից դէպի հարաւ: Այդ գետի ափին բնակւում էր մի արդար և իմաստուն մարդ՝ Յովհաննէս անունով: Նա մարգարէ էր: Մարգարէն այն տեսակ մարդ է, որ

քարոզելով ամեն բան ասում է համարձակ, թագաւորից էլ չի վախենում: Նրան ուղարկել էր Աստուած: Նա ժողովրդին ասում էր. «ապաշխարեցէք ձեր արած մեղքերը, որ ձեր սրտերը մաքրուեն»: Հրէաստանի ամեն կողմերից հարուստ, աղքատ գալիս էին նրա քարոզները լսելու: Նա աշխատում էր, որ Աստծու արքայութիւնը շուտով գայ երկրի վրայ. իրա քարոզութիւնով պատրաստում էր Յիսուսի ճանապարհը: Յովհաննէսը շատ պարզ կեանք ունէր. ապրում էր անապատ տեղում. հազինունէր ուղտի բրդից վերարկու, մէջքին կաշէ գօտիկ, ուտելիքն էր անտառի մեզր: Ամեն օր նրա մօտ մարդիկ էին գալիս, խորհուրդ հարցնում թէ ի՞նչպէս ապրեն, որ Աստծուն հաճելի լինեն: Ովքեր ուղիղ սրտով խոստովանում էին իրանց սխալները և խոստանում էին, որ այլ ևս այդպիսի բան չեն բոնիլ, նրանց մկրտում էր: Բայց կեղծաւորների ու գոռող հարուստների վրայ շատ էր բարկանում:

բ. Յիսուսը Յովհաննէս մարգարէի մօտ՝ Յովհաննէսի համբաւը հասել էր Նազարէթ. Յիսուսը նոյնպէս վերկացաւ, եկաւ նրանից մկրտուելու. այդ ժամանակ 30 տարեկան էր: Երբ Յովհաննէսը նրա խոստովանութիւնը լսեց. բարձրածայն ասեց. «ահա Աստծու գառը, որ բոլոր մարդկանց արդա-

ըռւթիւն պիտի սովորեցնի»։ Յովհաննէսը Յիսուսին չէր ուզում մկրտել, ասում էր. «դու ինձանից արժանաւոր ես, ես պիտի պլուխս քո առաջ խոնարհեցնեմ»։ Յիսուսը շնորհնեց այդ և ասեց. «դու ինձանից տարիքով մեծ ես, ժողովրդի մէջ անուանի ես, ես պիտի քեզանից մկրտուեմ»։ Յովհաննէսը յօժարուեց ու մկրտեց. Երբ Յիսուս ջրից դուրս էր գալիս, երկնքից Աստծու ձայնը լսուեց. «Պա է իմ սիրելի որդին. դրան հաւանեցի, ինչ որ ասի, լսեցէք»։

Յիսուսի մկրտութեան տօնր յունվարի 6-ին է, որ կոչւում է նոյնպէս Զրօրհնէք։

### 13. ՊԵՏՐՈՍԻ ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ

ա. Յիսուսը ժողակի վրայ։ Յիսուսը մի օր Գալիեայի ծովակի մօտ քարոզում էր Աստծու արքայութեան մասին, նրան լսողները խիտ շրջապատել էին ու իրար հարհըրում էին. ամեն մինն ուզում էր մօտիկից ականջ դնել. Ծովակի ափին երկու նաւակ կային կանգնած, նրանց տէրերը ձկնորսներ էին, դուրս էին եկել և իրանց ուռկանները լուանում էին։ Յիսուսը բարձրացաւ մի նաւակի վրայ և նրա տէր ձրկնորսին խնդրեց, որ ցամաքից փոքր ինչ հեռացնի։ Նստեց նաւակում և նրա միջից

սկսեց քարոզել ափի վրայ կանգնած ժողովրդին։

բ. Յիսուսն ինչո՞վ վարձատրեց ձկնորսին։ Յիսուսը երբ քարոզութիւնը վերջացընեց, ասաց ձկնորսին. «Պետրոս, նաւակը քաշիր ծովակի ներսը և ուռկանդ գցիր»։ Պետրոսն ասեց. «Վարդապետ, ողջ գիշերը ուռկան գցելուց յոգնել եմ, մի հատ ձուկ չեմ բըռնել, բայց երբ հրամայում ես, կրկատարեմ»։ Նաւակը տարաւ ծովակի մէջտեղը և ուռկանը գցեց։ Այնքան ձուկ լցուեց մէջը, որ չէր կարում մենակ ջրից հանել։ Միւս նաւակի ընկերներին նշանով կանչեց, որ գան, օգնեն։ Նրանք բերին իրանց նաւակը. նաւակների վրայ այնքան ձուկը արձեցին, որ առանց ընկղմուելու հազիւ ափ հասան։

գ. Պետրոսն ի՞նչպէս շնորհակալութիւն արեց. Պետրոսն իրա արած փոքր ծառայութեան համար Յիսուսից այդքան մեծ վարձատրութիւն ստանալով, երեսի վրայ ընկաւ Յիսուսի առաջ և ասեց. «Հեռու կացինձանից, Տէր, ես մի մեղաւոր մարդ եմ։ Ես արժանի չեմ, որ մօտիկ կանգնես և ինձ հետ խօսես»։ Այդ ժամանակ Յիսուսը մտածեց. «Երբ Պետրոսն այսպիսի լաւ սիրտ ունի, աւելի լաւ է միշտ հետո լինի, նակը գառնայ իմ աշակերտը։ Յիսուսն այդ յայտնեց Պետրոսին։ Յամաք հասան թէ չէ, Պետրոսն ու իրա ընկեր ձկնորսները. թողին

նաւակները, ամեն բան ու գնացին Յիսուսի ետնից:

### Ա Ղ Օ Թ Ք

Ամենաբարի Աստուած, առաքիր մեղ քո սուրբ շնորհքը, որ մեզ միաք պարզելի, մեր հոգու կարողութիւնները զօրացնի, որ մենք ուսում առնենք, մեծանանք Արարչիդ փառքի համար. մեր ծնողներին միմիթարենք և ազգին պիտանի լինենք:

### 14. ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՀՈԳՈՒ ԿԵՐԱԿՐԵԼԸ

ա. Յիսուս ի՞նչպէս էր վարում կարօտեալ ների հմտ: Մի անգամ Յիսուսը հեռացել էր անապատ, ամայի տեղ, որ անչափ խօսելուց, բարողելուց հանգստանայ, բայց ժողովուրդները քաղաքներից գուրս թափուելով գնացին նրա ետնից մինչև անապատ. որովհետև նրա քարոզութիւնը լսելուց չէին կշտանում: Յիսուսն ինքը թէպէտ շատ յոդնած էր, բայց որովհետև կարօտեալներին շատ էր սիրում, մեղք եկաւ բազմութեանը, բժշկեց, քարողեց նրանց մինչև մութն ընկնելը:

բ. Յիսուսի քարոզից ժողովուրդն ի՞նչպէս էր ղառեր: Այդ ժամանակ աշակերտները մօտեցան և ասին. «Տէր, տեղս անապատ է և օրը մթնելու վրայ, թող ժողովրդին,

որ գնայ մօտիկ շէները, իրա համար ուտելիք ճարի»: Յիսուսն ասեց. «նրա գնալը հարկաւոր չէ, դուք կերակրեցէք, տեսնեմ»: Աշակերտներն ասին. «մենք ի՞նչպէս կերակրենք այսքան բազմութեանը, հինգ հացից և երկու ձկնից աւելի բան չունենք»: Յիսուսն ասեց. «այդ պաշարը բերէք այստեղ և ժողովրդին խոտի վրայ շարքով նրատացրէք»: Աշակերտները կատարեցին: Յիսուս աղօթքով դիմեց իրա երկնաւոր հօրը, օրհնեց հացն ու ձուկը, կտրրտելով տուեց աշակերտներին, որ նստած բազմութեանը բաժանեն: Բոլորն էլ Յիսուսի քարոզութիւնից դառել էին քոյր ու եղբօր պէս սիրով, շատ ուտելիք ունեցողը տալիս էր չունեցողին: Հինգ հազար հոգի ժողովուրդը կըշտացաւ, դեռ շատ կտորտանք էլ մնաց:

### Ա Ղ Օ Թ Ք

Ամենի աչքերը քեզ են ուղղած, ով Աստուած, դու ես նրանց կերակրում իրա ժամանակ. բաց ես անում ձեռդ և լիացնում բոլորին քո ողորմութիւնով:

### 15. ՅԱՅՐՈՍԻ ԴՈՒՍՏՐԸ

ա. Մի հայր իրա հիւանդ աղջկայ համար Յիսուսի մօտ օգնութեան վազեց: Յայրոս անունով մարդ մի աղջիկ ունէր, որ շատ ծանը հիւանդ էր: Դա լսել էր, որ Յիսուսը

նեղութեան մէջ գտնուող մարդկանց օգնում է, այդ պատճառով եկաւ, ընկաւնրա ոտները և աղաչեց. «արի օգնիր իմ աղջկան, շատ ծանր հիւանդ է. վախենում ենք թէ մեռնի»: Երբ Յիսուս այդ մարդի վիշտը տեսաւ, իսկոյն վեր կացաւ, գնաց նրա հետ: Ժողովրդի մեծ բազմութիւն հետեւց նրան:

բ. Յիսուսը քժշկեց Յայրոսի աղջկան: Յիսուսը դեռ ճանապարհի կիսումն էր, որ հիւանդի տանից մարդ եկաւ ու Յայրոսին ասեց. «քո դուստրը մեռաւ արդէն, էլ ինչու ես նեղութիւն տալիս, վարդապետին բերում»: Յիսուս յոյսը դրել էր երկնաւոր Հօր վրայ. Յայրոսին սիրտ տուեց և ասեց. «մի վախենալ, հաւատա, որ ողորմած Աստուածը քեզ կարող է օգնել»: Զը թողեց ժողովրդին իրա հետ գնալ բացի Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս աշակերտներից: Հասաւ Յայրոսի տուն, տեսաւ մեծ բազմութիւն կանգնած սուզ է անում: Յիսուսը նրանց ասեց. «ինչու էք լաց ու կոծ սարքել, երեխան մեռած չէ, այլ քնած է»: Լսողները ծիծաղեցին նրա վրայ: Յիսուսն ուշ շը դարձրեց. ծնողների ու աշակերտների հետ մտաւ այն սենեակը, ուր պարկած էր աղջիկը. բոնեց նրա ձեռը և կտնչեց. «այ աղջիկ, քեզ եմ ասում, վեր կաց»: Աղջիկն ուշքի եկաւ ու վեր կացաւ: Նա 12 տարեկան էր: Յիսուսն ասեց. «դէ. երեխին

ըան տուէք, ուտի»: Ամենը զարմացան ու փառք տուին Յիսուսին ուղարկող Աստծուն:

### 16. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄՄԱՐԱՅԻ

ա. Ճանապարհորդ եւ աւազակներ: Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով: Ճանապարհն անցնում էր մի ամայի, անմարդաբնակ տեղով: Շատ քիչ մարդիկ էին անց ու դարձ անում այդ ճանապարհով, ուր շատ ծածուկ անկիւններ ու դարաններ կային գողերի ու աւազակների համար: Ահա այգտեղ ճանապարհորդն ընկաւ աւազակների ճանկը: Ինչ ունէր, չունէր, խլեցին. ընդդիմանալու պատճառով շատ տեղից վիրաւորեցին, կիսամեռ դրութեան մէջ թողին ու հեռացան:

բ. Վիրաւոր Ճանապարհորդ եւ տաճարի պաշտօնեաներ: Այդ գէպքը պատահելուց շատ չէր անցկացել, ահա մի քահանայ երևաց այդ ճանապարհին. Նա Երուսաղէմի տաճարում պաշտօն կատարած տուն էր վերադառնում: Քահանան տեսաւ վիրաւոր մարդին, բայց առանց օգնելու գնաց իրա գործին: Նրանից ետ այդ ճանապարհով եկաւ տաճարի մէջ ծառայող մի ղետացի: Վիրաւորը յոյս ունէր, որ սա գոնէ կօգնի իրան, բայց սա էլ նայեց վիրաւոր մարդին ու անու շաղիր թողնելով անցկացաւ:

գ. Վիրաւոր ճանապարհորդը եւ սամարացի:  
Այդ ճանապարհով դարձեալ մի մարդ անց-  
կացաւ: Նա նստած էր մի ջորու վրայ:  
Երբ նա մօտեցաւ, վիրաւորը նկատեց, որ  
գրաստաւորը մի սամարացի է, որին նման-  
ներին հրէաները ատելով ատում էին: Վի-  
րաւորն օգնութիւն ստանալու յոյսը կըտ-  
րեց: Բայց սամարացին վիրաւորին տեսաւ  
թէ չէ, խղճաց, մօտեցաւ, վէրքերը տընդզեց,  
ձէթ քսեց, խնամքով փաթաթեց, գինի խմա-  
ցրեց, դրեց իրա գրաստի վրայ և տարաւ  
մի պանդոկ և զիշերը խնամեց նրան: Սա-  
մարացին առաւօտը պիտի ճանապարհը շա-  
րունակէր, կանչեց պանդոկապետին, նրան  
փող տուեց ու ասեց. «Հոգ տար այս վի-  
րաւորի վրայ ինչպէս հարկաւոր է. միա-  
միտ կաց, ինչ որ աւելի ծախսած կըլինես,  
վերադարձին քեզ կը վճարեմ»:

### ԽՐԱՏ

Սիրիր քո ընկերին, ինչպէս քո անձը:

### 17. ՅԻՍՈՒՄ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ.

ա. Յիսուի աշակերտները եւ մանուկների  
ծնողները: Մի անգամ ժողովրդից շատերն  
իրանց մանուկներին բերին Յիսուսի մօտ  
և խնդրում էին, որ ձեռը նրանց գըլխներին  
դնի: Աշակերտները բարկանում էին բերող

կանանց ու մարդկանց վրայ ու չէին թո-  
ղում մօտենալ. «Ի՞նչ գործ ունեն այստեղ  
մանուկները. նրանք բոլորովին բան չեն  
հասկանում մեր վարդապետի քարոզածնե-  
րից: Միայն իրանց ճիչ ու աղաղակով կը  
խանգարեն բարեպաշտ լսողներին. շուտով  
հեռացը բարեպաշտ այստեղից»:

բ. Յիսուսը օրհնեց մանուկներին: Յիսուսը  
երբ տեսաւ աշակերտների վարմունքը, բար-  
կացաւ նրանց վրայ ու ասեց. «միք խան-  
գարիլ, թողէք, որ մանուկներն ինձ մօտ  
գան, երկնքի արքայութիւնը վրանց է պատ-  
կանում: Ճշմարիտ եմ ասում. ով ձեզանից  
մանուկի պէս անմեղ սիրտ չի ունենալ,  
նա չի մտնիլ երկնքի արքայութիւնը»: Յե-  
տոյ Յիսուսը մանուկներին մէկ մէկ գրկեց,  
ձեռը նրանց գըլխներին դնելով օրհնեց:

### Ա. Ղ Օ Թ Ք

Գոհ ենք քեզանից, Քրիստոս Աստուած,  
որ արժանացրիր մեզ ուսումն ստանալու.  
օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին  
և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են  
մեզ գէպի բարին. մեզ էլ ոյժ և կարողու-  
թիւն տուր, որ մեր ուսումը շարունակենք:

### 18. ՅԻՍՈՒՄԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՄՏՆԵԼԻ

ա. Յիսուսը աւանակ քերել տուեց: Երբ

Յիսուսը Զիթենեաց լեռան մօտեցաւ, ասեց  
երկու աշակերտի. «Գնացէք Բեթփագէ զիւ-  
ղը, որ գիմացն երեսում է, այնտեղ կը տես-  
նէք մի կապած աւանակ. արձակեցէք և  
բերէք: Եթէ հարցնող լինի, թէ մւր էք տա-  
նում. ասեցէք՝ Տիրոջը հարկաւոր է, շու-  
տով յետ կուղարկի»: Գնացին աշակերտները  
և բերին մի աւանակ և նրա վրայ դցեցին  
իրանց վերարկուները: Յիսուսը հեծաւ:

Բ. Ժողովուրդն ինչպէս պատուեց Յիսուսին:  
Այդ բանը գուր եկաւ ուխտաւոր ժողովը՝  
դիմումուել. մի քանիսն իրանց վերարկունե-  
րն էին փուռմ ճանապարհի վրայ, միւս-  
ներն արմաւի ծառի ոստերը կտրելով շաղ  
էին տալիս: Ուխտաւորների ցնծութիւնը  
կամաց կամաց շատանում էր. Յիսուսի  
առջեց ու ետևից գնալով աղաղակում էին.  
«Ո՞վսաննա, օրհնեալ լինի նա, որ գալիս է  
Տիրոջ անունով, ովսաննա Բարձրեալին»:

Յիսուսը մտաւ տաճար. նրան մօտե-  
ցան շատ կաղեր և կոյրեր: Յիսուսը բժբշկեց  
ամենին ու քաղաքից գուրս դալով գնաց  
Բեթանիա զիւղում հանգստանալու:

### Ա Դ Օ Թ Ք

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,  
Դու ինձ ամեն օր տաս հաղար բարի. —

Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ  
մայր.

Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղայր.  
Իսկ ես ինչ ունեմ, որ ինչ տամ քեղի,  
Առջեղ կընկնեմ, կենամ ազօթքի.  
Շնորքդ տուր ինձ, որ ծնողներիս,  
Ուսուցիչներիս և իմ մեծերիս  
Լինեմ սիրելիս, իսկ Քեզ հաճելի.

### ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԱ- ՂՈՒՄԸ

ա. Ի՞նչ արին Յիսուսի թշնամիները: Յի-  
սուսը շատ քահանաների և հարուստների  
մեղքերը երեսներին բռնել էր, որ ուղղի  
նրանց, բայց նրանք չէին հասկացել Յի-  
սուսի բարի մտադրութիւնը: Բարկացել,  
կատաղել էին նրա վրայ, կամենում էին  
սպանել: Թշնամիները նրանից գանգատ գը-  
նացին Պիղատոս դատաւորի մօտ ու ասին.  
«Սա չի կամենում կայսրին ննազանդուել և  
գրգըռում է մարդկանց, որ էլ հարկ չըտան  
և իրան թագաւոր դարձնեն»:

բ. Ի՞նչպէս թշնամիները Յիսուսին սպանե-  
ցին: Յիսուսի թշնամիները հանգիստ ու դա-  
դար չունէին, այնքան չարախօսեցին նրա  
վրայ իշխանութեան մօտ, որ վերջապէս Պի-  
ղատոսը իրաւունք տուեց տանել ու խաչել:

գ. Յիսուսը ներում էր թշնամիներին: Յի-  
սուսին զինուորները տարան այնտեղ, որ

Գողգոթա էր կոչւում, նրան բարձրացրին տնկած խաչի վրայ ու մեխեցին. Նրա հետ երկու չարագործների էլ խաչեցին, մէկն աջ, միւսը ձախ կողմից: Յիսուսը չէր բարկանում թշնամիների վրայ, այլ խաչուած տեղը նրանց համար ազօթում էր այսպէս. «Հայր, ներիր նրանց, որովհետեւ նրանք չը զիտեն, թէ ի՞նչ են գործում»:

Գ. Աշակերտ Յովհաննէս եւ մայր Մարիամ: Յիսուսի աշակերտները վախից վախել էին, որ չը բռնուեն: Բայց Յովհաննէս անունով մէկը չէր բաժանուել իրա վարդապետից. այժմ նա կանգնած էր խաչի տակ Յիսուսի մօր կողքին: Յիսուսը երբ նրանց տեսաւ, ձայն տուեց մօրը. «այսօրից դա կը լինի քո որդին», և աշակերտին դիմելով ասեց. «ահա քո մայրը»: Յետոյ ինքն իրան ազօթեց Յիսուսը ու բարձրածայն կանչեց, «Հայր, քո ձեռն եմ աւանդում իմ հոգին»: Այս ասեց և վախճանուեց: Գլխավերել գրած էր. «սա հրէաների թագաւորն է»: Այդ էր նրա յանցանքի անունը:

Ե. Ինչպէս թաղեցին Յիսուսին: Յովհաննէսը Մարիամին տարաւ իրա մօտ պահեց: Յիսուսի բարեկամները խաչից վերցրին նրա մարմինը. մաքուր կտաւով պատանեցին և դրին բարի մէջ փորած գերեզմանում և մի մեծ սալ գլորելով վակեցին նրա բերանը:

## 20. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

ա. Երեք կանայք դադարկ գերեզմանի մէջ: Շաբաթ երեկոյին Մարիամ Մագթաղենացին և ուրիշ երկու կին գնացին Յիսուսի գերեզմանին այցելութիւն, որ իրանց երախագիտութիւնը ցոյց տան: Երբ հասան գերեզմանի մօտ, տեսան բերանի սալը մի կողմ վլորած և նրա վրայ մի հրեշտակ նստած: Նրա դէմքը շոշողում էր ինչպէս վայլակ և հանդերձն սպիտակ էր ինչպէս ձիւն: Հրեշտակի տեսքից կանայք վախեցն: Բայց հրեշտակն ասեց. «միք վախենալ գիտեմ, որ դուք խաչուած Յիսուսին էր վնարում, նա այստեղ չէ: Ինչպէս առաջուց ասել էր, յարութիւն առաւ, ահա այնտեղը, ուր Տէրը պարկած էր: Շուտով գնացէք, աշակերտներին ասեցէք, թէ Յիսուսը յարեաւ և ձեզանից վաղ կը լինի Գալլիեայում»: Կանայք երբ գերեզմանից դուրս եկան, և շատ վախեցած էին, և շատ ուրախացած:

բ. Ո՞վ պատահեց նրանց ծանապարհին: Նրանք գնում էին, որ տեսածն աշակերտներին պատմեն. ճանապարհի կիսում նըրանց հանդիպեց մի մարդ և ասեց. «Ողջոյն ձեղ»: Կանայքը ճանաչեցին, մօտեցան, վարուեցին նրա ոտներին և երկրպագե-

ցին: Յիսուսն ասեց. «միք վախենալ, զնացէք, յայտնեցէք իմ եղբայրներին, որ գընան Գալիեա, այստեղ կը տեսնեն ինձ»:

### ԶԱՏԿԻ ԵՐԳ

Քրիստոսը յարութիւն առաւ մեռելներից, իրա մահով մահին յազմեց և իրա յարութիւնով մեզ կեանք պարզեց, փառք նրան յաւիտեանս, ամէն:

### 21. ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏՈՒՔԻ ՏԱԼ ԵՒ ԵՐԿԻՆՔ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ

Ա. Համբարձման տօնի մասին: Յիսուսն իրա յարութիւնից ետ շատ անգամ երկաց աշակերտներին և պատուէրներ տուեց: Վերջին անգամ հրաժեշտ տալիս ասեց նրանց. «ինչպէս ինձ ուղարկեց երկնաւոր Հայրը, այնպէս էլ ես ուղարկում եմ ձեզ: Գնացէք աշխարհի ամեն կողմերը և քարոզեցէք բոլոր ժողովուրդներին. մկրտեցէք նրանց Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ձեզ տեսնող ամեն մի մարդ այն ժամանակ կասի, որ դուք իմ աշակերտներն էք, երբ իրար սիրէք: Հասկացրէք ամենին, որ այս պատուէրը պահեն. մինչև աշխարհի վերջը կը լինեմ ձեզ հետ»:

Դրանից ետ մի ամպ իջաւ, Յիսուս Քրիստոսին պատեց ու աշակերտների աշերից ծածկելով բարձրացրեց երկինք:

### 22. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԸ

Ա. Հոգեգալուստ: Աշակերտներն սկզբում այնքան վախեցած էին, որ չէին համարձակում Յիսուսի մասին քարոզել: Երբ Երուսաղէմում Պենտէկոստէի տօնն էր, նրանք ժողովուած էին միատեղ, փակուեցին դոները, որ իրանց էլ փորձանք չըպատահի: Նոտած միասիրտ աղօթում էին. Նրանց մի զարմանալի բան պատահեց, յանկարծ Յիսուսի հոգին իջաւ նրանց վրայ և իւրաքանչիւրը լցուեց նրանով: Սկսեցին զանազան ազգերի լեզուով խօսել և նրանց քարոզել, որ իրար սիրեն և օգնեն:

Բ. Անդրանիկ քրիստոնեաների մասին: Աշակերտների քարոզները լսում էին ուխտաւորների բազմութիւնը: Նրանցից շատերը հաւատացին Քրիստոսին և մկրտուեցին աշակերտների ձեռով: Տօնախըմբութեան օրերին հաւատացողների թիւը հասաւ մինչև երեք հազար հոգու: Դա քրիստոնէական անդրանիկ համայնքն էր: Այդ բազմութիւնն ապրում էր սիրով, ինչպէս մի սիրտ և մի հոգի. ոչ ոք նրանց

մէջ չէր ասում, թէ այս ինչ բանն ի՞նն է.  
եթէ մէկին մի վիշտ կամ նեղութիւն էր  
պատահում, ամենը տիպում էին. եթէ  
մէկը լաւ էր, յաջողակ էր, նախանձելու  
փոխանակ ամենն ուրախանում էին: Մի  
խօսքով ամեն բան նրանց մէջ հասարա-  
կաց էր:

ՑԱՆԿ	Էջ
1. Մայր և գաւակ . . . .	5
2. Ընտանիք . . . .	7
3. Որբ . . . .	9
4. Աստուած ամեն բան տեսնում է	10
5. Որդու զզջումը . . . .	12
6. Ճամբորդ պատանին և արտուաը	15
7. Ազնիւ սիրա . . . .	16
8. Յիսուսի ծնունդը . . . .	17
9. Արեելքից եկած իմաստուները	20
10. Եղիպատոս փախչելը . . . .	22
11. Պատանի Յիսուսը տաճարում . . . .	24
12. Յիսուսի մկրտութիւնը . . . .	26
13. Պետրոսի ձկնորսութիւնը . . . .	28
14. Հինգ հազարին կերակրելը . . . .	30
15. Յայրոսի գուստը . . . .	31
16. Ողորմած սամարացի . . . .	33
17. Յիսուս և մանուկներ . . . .	34
18. Յիսուսի Երուսաղէմ մտնելը . . . .	35
19. Յիսուսի խաչելութիւնը . . . .	37
20. Յիսուսի յարութիւնը . . . .	39
21. Վերջին պատուէր տալը և համ- բառնալը . . . .	40
22. Քրիստոնէական անդրանիկ հա- մայնքը . . . .	41

ՀՀ Ազգային գրադարան



NL0150920

ԹԻԳԼԻՄԻ ԳՐԱԱՄՆՈՒԹԵՆԵՐՈՒՄ ՆԱԾԱՌԵՐՈՒՄ ԵՆ  
ՍԵՐ ԱՇԽԱՑՈՒՔ ԲԻՆՆԵՐԸ

1. Ծովինար, բ. տպ.	25 կ.
2. Ճէն թագաւորի աղջիկ, բ. տպ.	25 »
3. Երկու աղբերացեղ, բ. տպ.	30 »
4. Երկու զրոյց } ա. Երեք խոստովանոթիւն {	25 »
5. Աստուած աղքատի կերպում	20
6. Հէքիաթներ	30 »
7. Անմեռ աշխարհ	8 »
8. Ազգային առակներ	25 »
9. Աստուած չըճանաչով	10 »
10. Գալօ ափօ, բ. տպ.	12 »
11. Ժամանակը ոսկի, պատկերազարդ	40 »
12. «Միլո» գրքից, պատկերազարդ	40 »
13. Քաջ Աղասի, Սիրելի հերսո,	25 »
14. Սառուցի Յովան	30 »
15. Խուլ Խաչիկ, բ. տպ.	25 »
16. Երկասիրութիւններ	50 »
17. Փոքրոգի բարեկամներ	15 »
18. Վարդանանց և Ղեղինդեանց մասին, զրոյց պատկերներով	30 »
19. Կրօնի դասաւութիւնը, Ա. բաժանմունք, ձեմնարկ ուսուցիչների համար	40 »
20. Կրօն, Ա. բաժան, աշակերտ, համար	15 »

Հեղինակի հասցէն՝ Թիգլիս. Միքայէլեան փողոց  
№ 82. բն. 9.